**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿԻ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**


գ. Վարդենիկ, Կ. Շահինյան փողոց, շենք 51
հեռ.՝077381180
Էլ. Փոստ vardenik1@schools.am


N46
19. 03.2019թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
պարոն Գ. Սանոսյանին

Մեծարգո մարզպետ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2013 թվականի ապրիլի 15-ի N396- Ն հրամանով հաստատված « Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինա-կելի կարգի» 7-րդ կետի պահանջով , հիմք ընդունելով 11-րդ կետի պահանջը `«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում «Ֆիզիկա» առարկայի ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվել է մրցույթ :

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը:

Առդիր՝ 1 թերթ:

Դպրոցի տնօրեն /Թ. Ալոյան /

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան №1 հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության «Ֆիզիկա» առարկայի ուսուցչի թափուր աշխատատեղի համար /9 դասաժամ/ :

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1 .Հանձնաժողովի անունով գրավոր դիմում ՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է/Ձև 1/

2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն/Ձև 4/,

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,

6. Մեկ լուսանկար՝ 3 X4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության պաշտոնական հրապարակման օրվանից՝ 2019 թվականի մարտի 19 -ից մինչև 2019 թվականի ապրիլի 22-ը ներառյալ, ժամը $10^{00}$-ից մինչև $15^{00}$, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019 թվականի ապրիլի 26-ին, ժամը $14^{00}$_ին, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան №1 հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

Հասցեն ՝ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդենիկ, Ռ. Հովհաննիսյանի անվան №1 հիմնական դպրոցի շենք, Կ. Շահինյան փողոց, շենք 51:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077301180 հեռախոսահամարով:

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿԻ**
**Ա. ՕՀԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ**
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

---

№ 17 Հեռ(094218775) << 20 >> 03 2019թ.

*ՀՀ Գեղարքունիքի մարզպետ*
*պարոն Գ. Սանոսյանին*

Մեծարգո մարզպետ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ա. Օհանյանի անվան № 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում առկա է <<Ֆիզիկա>> առարկայի ուսուցչի թափուր տեղ:

Ղեկավարվելով ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի թիվ 396-Ն հրամանով հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի>> 5-րդ, 7-րդ և 11-րդ կետերի պահանջներով՝ տեղեկացնում եմ Ձեզ, որ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ա. Օհանյանի անվան № 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության <<Ֆիզիկա>> առարկայի ուսուցչի թափուր տեղը զբաղեցնելու համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը տեղի կունենա 2019 թվականի ապրիլի 18-ին, ժամը $12^{00}$-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի N2 հիմնական դպրոցի շենքում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիկ, Բանավան 9:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Վարդենիկի № 2 հիմնական դպրոցի տնօրեն Ս. Գափոյան

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ա. Օհանյանի անվան N2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության <<Ֆիզիկա>> առարկայի ուսուցչի թափուր տեղի համար՝ 8 դասաժամ:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ(դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն(Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները(դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3 x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայցնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2019 թվականի ապրիլի 12-ը ներառյալ, ամեն աշխատանքային օր՝ ժամը $10^{00}$-ից մինչև $15^{00}$-ն: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019 թվականի ապրիլի 18-ին, ժամը $12^{00}$-ին, Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ա. Օհանյանի անվան N2 հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 094218775 հեռախոսահամարով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ N2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ**
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

գ. Կարմիրգյուղ
Հեռ. 094206651
Էլ. փոստ Karmirgyugh2@schools.am

N58
<<20>> <<03>> 2019թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
պարոն Գ. Սանոսյանին

Մեծարգո՛ մարզպետ,

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N396-Ն հրամանով հաստատված <<Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգ>>-ի 7-րդ կետի համաձայն՝ տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղի N2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում առկա են <<Մաթեմատիկա>> և <<Տեխնոլոգիա>> (տղաների խումբ) առարկաների ուսուցիչների թափուր աշխատատեղեր՝ <<Մաթեմատիկա>> առարկան շաբաթական 13 դասաժամով, <<Տեխնոլոգիա>>-ն՝ 5 դասաժամով:

Դպրոցի տնօրեն /Գոհար Ենգոյան/

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՆԻՇ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե - գ Արտանիշ

ՀՎՀՀ 08101962

N 56

« 20 » մարտի 2019թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

պարոն Գ.Սանոյանին

Հարգելի՛ պարոն Սանոյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգ>>-ի 1-ին գլխի 5-րդ կետի պահանջներին համապատասխան ֆրանսերեն /16 դասաժամ/, պատմություն /12 դասաժամ/, հասարակագիտություն /3 դասաժամ՝ ընդհանուր 15 դասաժամ/, քիմիա /6 դասաժամ/, ռուսաց լեզու /17 դասաժամ/ առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար <<Գեղամա աշխարհ>> թերթում (2019թ. մարտի 15-ի, թիվ 7 /435/) տրվել է հայտարարություն: Մրցույթները կկայանան 2019 թվականի ապրիլի 15-ին ժամը 11: 00 -ից , Արտանիշի միջնակարգ դպրոցում :

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը:

Առդիր 1/մեկ/ թերթ:

Դպրոցի տնօրեն՝ Ա.Մարգարյան